

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԶՈՐՐԱԲ ՀՐԱԶՅԱՅԻ

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻԶԵՐԿՐԱԾՈՎՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
(XIII-XIV դդ.)

Է.00.01. «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ԱԵՂԱԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2010

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների թեկնածու,
Վ. Ա. Տեր-Պետրոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
Ա. Ա. Բոգոյան

պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ Ա. Է. Զովհաննիսյան

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2010 թ. դեկտեմբերի 24-ին ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՒԻ-ի 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24գ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2010 թ. նոյեմբերի 23-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Կ. Զ. Խաչատրյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱՅԻՐ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Միջերկրական ծովը համաշխարհային տնտեսության կառուցվածքային զարգացման բնօրրաններից է եղել, որի միջավայրի ծնունդն են ծովային հնագույն ամենահայտնի քաղաքակրթությունները՝ փյունիկյան, հին հունական, հռոմեական և այլն: Դարերի ընթացքում այստեղ մշակվել և կատարելագործվել են տնտեսական քաղաքակիրթ հարաբերությունների իրականացման ավանդույթները: Միջազգային առևտրական կապերի հաստատումն այդ հարաբերությունների ձևավորման առաջնային նախապայմանն էր: Քննվող թեմային վերաբերող ժամանակաշրջանը՝ XIII-XIV դդ., միջերկրածովյան առևտրական համակարգի պատմության առաջնային փուլերից է, երբ Արևմտյան Եվրոպայում ընթանում էին տնտեսական աննախադեպ ձևափոխումներ, որոնք դրսևորվում էին ոչ միայն ձեռնարկատիրական արտադրության զարգացմամբ, այլև ֆինանսատրանսական բոլորովին նոր որակի հարաբերություններով: Դրա հետևանքով տնտեսություն-քաղաքականություն փոխազդեցությունը դրսևորվում էր առավել բարդ կազմությամբ: Խաչակրաց արշավանքների անմիջականորեն մասնակցած իտալական հանրապետությունները (Վենետիկի, Ջենովայի, Պիզայի և այլն), որոնք միջերկրածովյան առևտրի գլխավոր դերակատարներն էին, արդեն XIII դ. իրենց անդրծովյան տնտեսական ու քաղաքական գործունեությունը ծավալում էին դարերով մշակված ու կատարելագործված հմուտ ռազմավարությամբ: Ավելին, XII դ. հասկապես իտալական քաղաքներում ձևավորվել էին առաջին բանկերը, որոնք մեծ չափի ֆինանսներ էին ներդնում մաս միջազգային առևտրի բնագավառում: Միևնույն ժամանակ մերձավորարևելյան ու հյուսիսաֆրիկյան պետություններն աստիճանաբար ընկղմվում էին տնտեսական ճգնաժամի մեջ: Հարավեվրոպական պետությունների հետ առևտրական շփումներից վերջիններիս կախվածությունը գնալով ավելի նկատելի էր դառնում, ինչը, անշուշտ, չէր կարող չանդրադարձալ նաև նրանց արտաքին քաղաքականության վրա:

Ահա այս նոր բնույթի գործոններով ձևավորվող աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում XIII դ. անմիջապես սկզբից Կիլիկիայի հայկական պետությունը սկսում է մեծ թափով ներգրավվել տվյալ ժամանակի անենազարգացած տնտեսական համակարգի, այն է՝ միջերկրածովյան առևտրի մեջ: Ի դեմս արևմտաեվրոպական առևտրական գերտերությունների՝ Կիլիկյան Հայաստանը միջազգային հարաբերություններում ձեռք էր բերում բոլորովին նոր տեսակի գործընկերներ: Հայոց թագավորությունն այդուհետև հայտնվում էր շատ ավելի ընդգրկուն կառուցվածք ունեցող աշխարհաքաղաքական միջավայրում: Առևտուրը Կիլիկիայի պետական զանձարանին մեծ եկամուտներ էր ապահովում, խթանում տնտեսության զարգացումը և դառնում էր կրի արտաքին քաղաքականության օրակարգի

առաջնահերթ խնդիրներից մեկը: Կիլիկիայի գրեթե բոլոր մեծ քաղաքներում, այդ թվում և մայրաքաղաք Սիսում հանգրվանած միայն եվրոպացի վաճառականները հաշվվում էին հարյուրներով: Վերջիններիս առևտրական գործունեությունը, համայնքային կյանքի բնութագիրը և այլ խնդիրների հետազոտությունն առանձնահատուկ կարևորություն ունի նաև Կիլիկիայի հայկական պետության առօրեական կյանքի պատմության լուսաբանման տեսանկյունից: Մինույն ժամանակ, միջազգային առևտրի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի ամբողջական ու համակողմանի ներկայացնել Կիլիկյան Հայաստանի քաղաքական պատմությունը:

Վերը թվարկյալ հանգանակներով է պայմանավորված XIII-XIV դդ. միջերկրածովյան առևտրում Կիլիկյան Հայաստանի դերակատարության պատմության ուսումնասիրության անհրաժեշտությունն ու կարևորությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ. Ատենախոսության նպատակն է բազմակողմանի վերլուծության ենթարկել XIII-XIV դդ. միջերկրածովյան առևտրի համակարգում Կիլիկիայի հայկական պետության դերակատարությունը, որն իրականացնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝

- Ներկայացնել Կիլիկիայի աշխարհագրական բնութագիրը որպես միջազգային առևտրի զարգացման կարևոր նախապայման՝ հատուկ ուշադրություն դարձնելով թագավորության տարածքում խաչաձևվող առևտրական մայրուղիների նկարագրությանը:
- Հանգանակալից վերլուծության ենթարկելով Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական ասպանքաշրջանառության կազմությունը՝ ցույց տալ, թե որքանով էին դրանում ներառված պետության տեղական՝ արհեստավորական ու գյուղատնտեսական արտադրանքները, ինչպես նաև ներկայացնել երկրի նշանակությունը տարանցիկ առևտրում:
- Մանրագրին քննելով Կիլիկյան Հայաստանում կիրառված միջազգային առևտրի կազմակերպման եղանակները՝ բացահայտել միջերկրածովյան առևտրի համակարգում Հայոց թագավորության տնտեսական ներդրավածության աստիճանը:
- Միջազգային առևտրում տարված հարկային քաղաքականության օրինակով ներկայացնել Կիլիկիայի հայկական պետության երաշխավորած նպաստավոր պայմանները վաճառականներին:
- Անդրադարձալ Կիլիկյան Հայաստան այցելած ու բնակություն հաստատած օտարազգի վաճառականության ազգային և սոցիալական կազմին, հնարավորինս լուսաբանել նրանց առևտրական գործունեության բնութագիրը, ներկայացնել համայնքային կազմակերպվածության մակարդակը:
- Հանադրելով Հայկական Կիլիկիայի միջազգային՝ առևտրական և քաղաքական հարաբերությունների պատմական զարգացումները՝ լուսաբանել դրանց միջև ձևավորված փոխազդեցության մակարդակը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ. Ատենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք պատմաքննական և պատմահամադրական

մեթոդների գույքը ամառը: Եզրահանգումները կատարվել են սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների համադիր վերլուծության հիման վրա՝ անաչառ պատմություն շարադրելու սկզբունքով:

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ. Թեև միջերկրածովյան առևտրում Կիլիկյան Հայաստանի ակտիվ դերակատարությունն ընդգրկել է XIII դ. սկզբից մինչ 1337 թ. Այսա նավահանգստի անկումն ընկած ժամանակամիջոցը, սակայն մեր առջև դրված խնդիրներին առաելի համակողմանի և ամբողջական մոտեցում ցուցաբերելու նպատակով ատենախոսության մեջ հարկ ենք համարել ներառել նաև մինչև Հայկական թագավորության անկումը տեղի ունեցած պատմական զարգացումների քննությունը:

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ. Ատենախոսությունում առաջին անգամ տարաբնույթ սկզբնաղբյուրների և գիտական ուսումնասիրությունների վերլուծության հիման վրա ատենախոսությունում լուսաբանվել են Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական հարաբերություններին առնչվող հիմնախնդիրները: Այսպես, օրինակ, պարբերացման է ենթարկվել միջազգային առևտրում Կիլիկյան Հայաստանի ներգրավման ընթացքը: Ապրանքատեսականու կազմության, Կիլիկյան նավահանգիստների առևտրական կապերի և առևտրի կազմակերպման եղանակների քննությունը հնարավորություն է ընձեռել բացահայտելու խնդրո առարկա ժամանակաշրջանում Միջերկրական ծովում ձևավորված ֆինանսատնտեսական համակարգում Կիլիկյան Հայաստանի ներգրավվածության մակարդակը: Մերձավոր Արևելքում և Եվրոպայում տեղի ունեցած աշխարհաքաղաքական վճռորոշ իրադարձությունների և միջազգային առևտրական հարաբերությունների զարգացումների ընթացքի համադիր վերլուծությամբ հետազոտվել է այդ գործընթացների փոխազդեցության աստիճանը, ինչը թույլ է տվել ավելի համակողմանի ներկայացնելու Կիլիկյան Հայաստանի քաղաքական պատմության տարբեր հարցեր:

Ուսումնասիրվող թեման Հայոց պատմության այն եզակի և յուրահատուկ ժամանակաշրջաններից է, որի ընթացքում հայկական իրականությունը սերտորեն առնչվել է ծովային մշակույթի հետ: Աշխատությունում քննության առնված խնդիրներն ու ստացված արդյունքները հասկապես կարևոր են Արևելքի և Արևմուտքի միջև զաղախարակյան ու մշակութային շփումներում հանձինս Կիլիկյան Հայաստանի՝ հայկական իրականության դերակատարության պատմության հետազոտության տեսանկյունից: Ղա պոլիսական է նաև մեր օրերի համար, երբ համաշխարհայնացման գործընթացները շատ ավելի մեծ թափով են ընթանում, որոնց դիմակայելու համար յուրաքանչյուր ազգին ու պետությանը անհրաժեշտ է դրանցում կողմնորոշվելու պատմական հարուստ փորձառություն:

Ատենախոսությունում իրականացված վերլուծություններն ու եզրահանգումները կարող են օգտագործվել Կիլիկիայի հայկական պետության պատմության հատուկ դասընթաց մշակելու նպատակով: Միևնույն ժամանակ, փաստական տարաբնույթ նյութերն ու դրանց հիման վրա կատարված հետազոտությունները կարող են օգտակար լինել խնդրո առարկա ժամանակաշրջանում Արևելյան Միջերկրականում Եվրոպացի

վաճառականության գործունեությանը վերաբերող տարատեսակ խնդիրների ուսումնասիրության տեսակետից:

ԱՏԵՆԱԽՈՒՄՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱԲՆԱՌԹՅՈՒՆԸ. Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱՄ Պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի կողմից: Ուսումնասիրության հիմնական խնդիրները լուսաբանվել են հեղինակի հրատարակած 5 հոդվածներում և հանրապետական ու միջազգային գիտատեղիներում ընթերցած զեկուցումներում:

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՎՈՒԹՅԱՆ ԱՄՏԻՃԱՆԸ. ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՄՈՒԹՅՈՒՆ. Ատենախոսության մեջ օգտագործվել են բազմաթիվ տարաբնույթ սկզբնաղբյուրներ, սակայն հայկականները քիչ մաս են կազմում: Պատճառն այն է, որ մասնավորապես XIII-XIV դդ. ինչպես Կիլիկիայի, այնպես էլ բուն Հայաստանի հայ պատմիչներն առավելապես եկեղեցական և իշխանական դասերին պատկանելով պետության տնտեսական կյանքն իրենց հետաքրքրության շրջանակում չեն պահել¹: Նրանք հիմնականում անդրադարձել են Կիլիկյան Հայաստանի բաղաբանական պատմությանը: Այնուամենայնիվ, հարկ է առանձնացնել որոշ հեղինակների, որոնք թեև նույնպես չեն անդրադարձել Հայոց թագավորության տնտեսական կյանքին և առավել ևս առևտրական հարաբերություններին, սակայն կարևոր վկայություններ են թողել Վենետիկի և Տենովայի Հանրապետությունների պատմությանն առնչվող մի շարք կարևոր անցքերի մասին: Այդ առումով հատկապես արժեքավոր են Հեթում Նոյիցու², Հեթում Պատմիչի³ և Հեթում Բ-ի⁴ աշխատությունները: Վերջին երկուսը բացարձիկ տեղեկություններ են հաղորդում Կիլիկիայի ակերին Վենետիկի և Տենովայի միջև տեղի ունեցած խոշոր ծովամարտի մասին:

Առանձնակի կարևորություն ունեն Սմբատ Սպարապետի⁵, Կիրակոս Գանձակեցու⁶, Ներսես Պալիանեցի⁷, ինչպես նաև Լևոն Ե-ի (1374-1375) ֆրանսիացի խոստովանահայր և կենսագիր Հովհան Ղարոբեյի⁸ Կիլիկիայի պատմության ուսումնասիրության համար արժեքավոր աշխատությունները:

Հայտնի է, որ Կիլիկյան Հայաստանն ունեցել է թագավորական արվիվ, որը 1266, 1275 և 1375 թթ. այրվել է մամուլքների կողմից: Ղրա հետևանքով Կիլիկիայի հայոց թագավորության պետական հարուստ դիվանից մեզ են հասել ընդամենը հայերեն 6 բնագրեր, որոնք պահպանվել են եվրոպական

¹ Микаелян Г., История Киликийского Армянского государства, Е., 1952, с. 396.

² Հեթում Նոյիցի, Հանառու պատմություն ժամանակաց, Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, Ե., 2007, էջ 527-554:

³ Հեթում Պատմիչի ժամանակագրությունը, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, կազմ. Հակոբյան Վ. Ա., Ե., 1956, էջ 33-93:

⁴ Հեթում Բ-ի տարեգրությունը, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. I, կազմ. Հակոբյան Վ. Ա., Ե., 1951, էջ 65-101:

⁵ Ղառաատանագիրք Սմբատ իշխանի (Գունդատարի), Ա. Էքմիաժին, 1918: Смбат Спарпет, Судебник, Е., 1958 (գրաբար տեքստ). Սմբատ Սպարապետ, Պատմություն, Մոսկուա, 1856:

⁶ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ՝ Վ. Ա. Մելիք-Օհանյանյանի, Ե., 1961:

⁷ Ներսես Պալիանցի ժամանակագրական հատվածները, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, կազմ. Հակոբյան Վ. Ա., Ե., 1956, էջ 173-194:

⁸ Յովհան Ղարոբեյ, ժամանակագրություն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1891:

արխիվներում⁹: Չենք բացառում, որ հենց արքունական արխիվում են պահվել պետության տնտեսության տարբեր բնագավառներին այս կամ այն կերպ առնչված իրավական տարբերույթ փաստաթղթեր, որոնց բացակայությունն անդառնալի հետևանքներ ունի Կիլիկյան Հայաստանի սոցիալ-տնտեսական ու հասարակական կյանքի պատմության ուսումնասիրության համար:

Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրի պատմության լուսաբանմանը նպաստում են օտարալեզու բազմաբնույթ սկզբնաղբյուրներ, որոնք ներառում են նույնիսկ XIV դ. եվրոպական գրականության հռչակավոր գործերը: Բավական է միայն նշել իտալական Վերածննդի խոշորագույն ներկայացուցիչ Ֆիովաննի Բոկաչչոյին (1313-1375), որն իր «Ղեկաներուն» նշանավոր երկում բազմաթիվ հիշատակություններ ունի Կիլիկյան Հայաստանի՝ մասնավորապես Այասի մասին, որոնց զգալի մասը կապված է վաճառականների հետ¹⁰: XIV դ. անգլիական գրականության գոհարի՝ «Քենտերբերյան պատմվածքների» հեղինակ Ջեֆրի Չոսերն (1343-1400) Այսար հիշատակել է Արևելքի խոշորագույն քաղաքների կողքին¹¹:

Կիլիկյան Հայաստանի և բնդհանրապես միջերկրածովյան ու սևծովյան միջնադարյան պետությունների ու քաղաքների միջազգային առևտրի պատմության հետազոտության հիմնարար սկզբնաղբյուրները դրանցում առևտրական գործունեություն ծավալած եվրոպացիների գրառած տարատեսակ փաստաթղթերն են:

Առաջնահերթ կարևորություն ունեն նոտարական գործերը, որոնք պարունակում են խտացված, բազմակողմանի հարուստ տեղեկություններ: Դրանք նոտարական գործակալների կողմից կազմվել են անործովյան երկրների եվրոպական վաճառականական գաղութներում և այժմ պահպանվում են Իտալիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի ու շատ այլ պետությունների արխիվներում: Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրի ուսումնասիրության համար անփոխարինելի են Այասում և կիարական քաղաքներում գործած ջենովացի և վենետիկյո նոտարական գործակալների՝ լատիներենով ձևակերպած գործերը, որոնք առևտրական տարատեսակ պայմանագրեր են կոնմենդաներ, փոխառություններ, վստահագրեր, անդորրագրեր, կտակներ և այլն: Մինչ այժմ հրատարակվել են դրանց հազարավոր օրինակներից կազմված սուվարածավալ բազմաթիվ ժողովածուներ:

Իտալացի պատմաբան Կ. Դեզինոնին հրատարակել է Այասում 1270-ական թթ. կազմված ջենովական նոտարական հարյուրավոր փաստաթղթեր: Նույն գիտնականի լամբազությանը լույս է տեսել նաև 1299-1301 թթ.

⁹ **Բոռնազյան Ա.**, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան Հայկական պետությունում XI-XIV դարերում, Ե., 1973, էջ 25-26:

¹⁰ **Տիովաննի Բոկաչչո**, Ղեկաներուն, Ե., 1960, էջ 174, 409, 416-419, 650-651:

¹¹ **Chaucer's Canterbury Tales** (Selected): An Interlinear Translation by Hopper V. F., New York, 1970, p. 5.

Ֆանագուստայում ձևակերպված ջենովական նոտարական գործերի հավաքածուն¹²:

1270-ական թթ. մինչև XIV դ. վերջին վերաբերող վենետիկյան արխիվային փաստաթղթերի հարուստ մի այլ ժողովածուի հրատարակողը Ղևոնդ Ալիշանն է: Այդ ժողովածուում ներառված են նոտարական գործեր, վենետիկյան Սենատի որոշումներ և այլ փաստաթղթեր¹³:

Կիպրոսի ջենովական նոտարական մեծաքանակ գործեր են հրատարակվել նաև XX դ. սկզբին, որոնց զգալի մասը վերաբերում է Կիլիկյան Հայաստանի հետ առևտրական կապերին¹⁴: Շատ ավելի մեծածավալ հատորներ են լույս տեսել XX դ. երկրորդ կեսին, որոնց խմբագիրները Ֆրանսիայի և Իտալիայի հեղինակավոր համալսարաններում աշխատող հայտնի միջնադարագետներ են: Ա. Բոնդի Սեբելիչոն հրատարակել է վենետիկցի նոտարական գործակալ Ֆելիչե դե Մելլիսի՝ 1315-1348 թթ. Այասում և Վենետիկում ձևակերպած նոտարական գործերի երկհատոր արժեքավոր ժողովածուն¹⁵:

1980-ական թթ. մեկը մյուսի ետևից լույս են տեսել կիպրական քաղաքներում կազմված ջենովական նոտարական հազարավոր փաստաթղթերի ժողովածուներ. Մ. Բալարը¹⁶, Ռ. Պալմինին¹⁷ և Վ. Պոլոնին¹⁸ հրատարակել են նոտարներ Լամբերտո դե Սամբուչետոյի և Ջիովաննի դե Ռոքայի հեղինակած փաստաթղթերի սովորածավալ հինգ հատոր: XIII դ. վերջին և XIV դ. առաջին կեսին Միջերկրական ծովի արևելյան մասում Կիպրոսի թագավորության արտաքին ասլանքաշրջանառության հաշվեկշիռում Կիլիկյան Հայաստանն առաջին տեղում է եղել, ուստի պատահական չէ, որ

¹² **Desimoni C.**, Actes passés en 1271, 1274 et 1279 à l'Alas (Petite Arménie) et à Beyrouth par devant des notaires génois // Archives de l'Orient latin, t. I, Paris, 1881. **Նույնի՝** Actes passés à Famaguste de 1299 à 1301 par devant le notaire génois Lamberto di Sambuceto // Archives de l'Orient latin, t. II, Paris, 1884.

¹³ **Alishan L.**, L'Ameno-Veneto, Compendio Storico e Documenti delle Relazioni degli Amerini coi Veneziani, Primo periodo, secoli XIII-XIV, Parte II, Documenti, Venezia, 1893.

¹⁴ **Ferretto A.**, Codice diplomatico delle relazioni fra la Liguria, la Toscana e la Lunigiana ai tempi di Dante (1265-1321), parte seconda (dal 1275 al 1281) // Atti della Società Ligure di storia Patria, XXXI. Parte Seconda, Roma, 1903. **Նույնի՝** Annali storici di Sestri Ponente e sue famiglie (dal secolo VII al secolo XV) // Atti della Società Ligure di storia Patria, V. XXXIV, Genova, 1904.

¹⁵ **Bondi Sebellico A.**, Felice de Melis, prete e notaio in Venezia ed Ayas, 1315-1348, V. 1, Venezia, 1973, V. 2, Venezia, 1978.

¹⁶ **Balard M.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (11 ottobre 1296 - 23 giugno 1299), Genova, 1983 (այսուհետև՝ **Balard M.**, Notai genovesi in Oltremare, A.). **Նույնի՝** Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (31 marzo 1304 - 19 luglio 1305, 4 gennaio - 12 luglio 1307), Giovanni de Rocha (3 agosto 1308 - 14 marzo 1310), Genova, 1984 (այսուհետև՝ **Balard M.**, Notai genovesi in Oltremare, B.).

¹⁷ **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio - 27 ottobre 1301), Genova, 1982 (այսուհետև՝ **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare, A.). **Նույնի՝** Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (gennaio - agosto 1302), Genova, 1987 (այսուհետև՝ **Pavoni R.**, Notai genovesi in Oltremare, B.).

¹⁸ **Polonio V.**, Notai genovesi in Oltremare. Atti rogati a Cipro da Lamberto di Sambuceto (6 luglio 1300 - 3 agosto 1301), Genova, 1983.

նուտարական վերոնշյալ գործերի ահռելի քանակությունն ուղղակիորեն վերաբերում է Կիլիկյան քաղաքների հետ առևտրական կապերին:

Թեմայի նշակման համար հատուկ կարևորություն է ունեցել Ջենովայի միջնադարյան առևտրի պատմության իտալացի հեղինակավոր մասնագետ Լ. Բալլետտոյի հրատարակած նուտարական գործակալներ Պեդրո դե Բարգոնեյի և Ֆեդերիկո Պիացցալունգայի կողմից 1270-ական թվականներին Այասուն ձևակերպված փաստաթղթերի ժողովածուն¹⁹:

Բարեբախտաբար, Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական ապամանագրերի մեծ մասը պահպանվել է²⁰: Վ. Լանգլուան եվրոպական քաղաքների բազմաթիվ արխիվներում սփռված այդ արժեքավոր փաստաթղթերը հավաքել և հրատարակել է ժողովածուի տեսքով²¹: Ա. Սոպրակասան նույնպես հրատարակել է նման ժողովածու, որտեղ, սակայն, ընդգրկված են միայն Կիլիկյան Հայաստանի և Վենետիկի միջև կնքված ապամանագրերը²²:

Միջնադարյան առևտրատնտեսական հարաբերությունների յուրաքանչյուր հետազոտողի նշտական ուղեկիցները վաճառականական ձեռնարկներն են: Դրանց հեղինակները մեծ մասամբ իտալացի առևտրական գործակալներն էին, որոնք, այցելելով տարբեր երկրներ, զրի էին առնում դրանցում տարածված չափի ու կշռի միավորները, վաճառվող ապրանքների տեսականին և այլն: Նման մի ձեռնարկի հեղինակ է 1335 թ. (կամ 1336 թ.) Կիլիկյան Հայաստան այցելած և Լևոն Դ-ի (1320-1342) հետ առևտրական ապամանագիր կնքած, Ֆլորենտական Բարդի բանկային տան գործակալ Ֆրանչեսկո Բալդուչի Պեգոլոտտին: Ի թիվս հայտնի բոլոր առևտրական ձեռնարկների՝ այդ աշխատությունն ամենանշանավորն է, որտեղ Պեգոլոտտին բավական ծավալուն բաժին է հատկացրել Կիլիկյան Հայաստանին²³:

Հաջորդ մեծարժեք ձեռնարկը գրվել է XIV դ. առաջին կեսին վենետիկցի Ջիբալդոնե դա Կանալի կողմից: Այստեղ նույնպես Կիլիկյան Հայաստանը ներկայացված է առանձին վերնագրի տակ, որտեղ օգտակար տեղեկություններ կան Այասուն վաճառված ապրանքների, կիրառված չափ ու կշռի միավորների և այլնի մասին²⁴:

Արժեքավոր է նաև XIV դ. առաջին կեսին կրեելքում քաղաքական ակտիվ գործունեություն ծավալած վենետիկցի Մարինո Սանուտո Տորսելլո Ալագի «Խաչակիրների գաղտնի գիրքը՝ Սուրբ երկրի վերանվաճման և պահպանման

¹⁹ **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, atti rogati a Laiazzo da Federico di Piazzalunga (1274) e Pietro di Bargone (1277, 1279), Genova, 1989.

²⁰ **Բոդլան Ա.**, Կիլիկյան Հայաստանի պատմութիւնը Միջերկրական ծովի պետութիւնների արխիվներում, «Հայաստանի պատմութեան միւթեր կենտրոնական եվրոպայի դիւաններում», Ե., 2001, էջ 9-20.

²¹ **Langlois V.**, Le Trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupeniéns, Venise, 1863.

²² **Sopracasa A.**, I trattati con il regno armeno di Cilicia, 1201-1333, Roma, 2001.

²³ **Francesco Balducci Pegolotti**, La Pratica della Mercatura, New York, 1970 (այսուհետև՝ **Pegolotti**).

²⁴ **Zibaldone da Canal**, Manoscritto Mercantile del sec. XIV, ed. A. Stussi, Venezia, 1967 (այսուհետև՝ **Zibaldone**). **Dotson J. E.**, Merchant Culture in Fourteenth-Century Venice: "The Zibaldone da Canal", Binghamton, NY, 1994.

մասին» աշխատությունը, որտեղ հեղինակը բազմակողմանի, արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Կիլիկյան Հայաստանի մասին²⁵:

Կիլիկյան Հայաստանում միջազգային առևտրական նավագնացության, օտարազգի վաճառականության և այլ խնդիրների ուսումնասիրությանը մեծապես նպաստում են Վենետիկի Սենատի որոշումների²⁶, դիվանագիտական փաստաթղթերի²⁷ ու եվրոպական քաղաքների ծովային առևտրին վերաբերող տարատեսակ նյութերի²⁸ հավաքածուները: Պատվության և եվրոպական միապետերի հետ Կիլիկյան Հայաստանի XIII-XIV դդ. դիվանագիտական շփումների ուսումնասիրության համար բացառիկ են Հռոմում և Ալիմյոնում ձևակերպված պատական դիվանատան փաստաթղթերի հրատարակված ժողովածուները²⁹:

Հայ պատմագիտության մեջ Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրին առնչվող խնդիրներին առաջինն անդրադարձել է Ղևոնդ Ալիշանը իր «Սիսուան» և «Հայ-Վենետ» կոթողային աշխատություններում³⁰: Հեղինակը հատկապես մեծ աշխատանք է կատարել իտալական դիվանների հետազոտության ուղղությամբ երևան հանելով բազմաթիվ կարևոր փաստաթղթեր, որոնց միջոցով լուսաբանել է Կիլիկիայում եվրոպացի վաճառականության զործունեության, դրամներին, չափ ու կշռի միավորներին վերաբերող բազմաթիվ խնդիրներ:

Տասնամյակներ անց Գր. Միքայելյանը հրապարակ հանեց Կիլիկիայի հայկական պետության ամբողջական պատմությանը նվիրված իր մենագրությունը, որտեղ երկու բաժին է հատկացված Կիլիկիայի միջազգային առևտրական հարաբերությունների բազմակողմանի քննությանը: Ձեռքի տակ

²⁵ **Marino Sanuto**, Liber secretorum fidelium crucis super Terrae Sanctae recuperatione et conservatione, Prelum Academicum Universitatis Torontonensis, 1972. Reprint of the edition: Hanoviae: Heredes I. Aubrii, 1611, with a new foreword in English by J. Prawer (այսուհետև՝ **Marino Sanuto**).

²⁶ **Thiriet F.**, Régestes Des Délibérations Du Sénat De Venise Concernant La Romanie. t. I. 1329-1399. Consiglio dei Rogati, Paris, 1958. **Giomo G.**, Regeste di alcune deliberazioni del Senato Misti // Archivio Veneto, t. XXXI, Venezia, 1886, p. 179-200. **Leduc F.**, Venezia-senato, deliberazioni miste: Registro 19 (1340-1341). V. 6, Senato, Venezia, 2004.

²⁷ **Diplomatarium Veneto-Levanticum**, V. 1, 1300-1350, ed. G. M. Thomas, R. Predelli, Venetiis, 1880. **Finke H.**, Acta Aragonensia, Quellen zur deutschen, italienischen, französischen, spanischen, zur Kirschen- u. Kulturgeschichte aus der diplomatischen Korrespondenz Jaymes II (1291-1327), B. II, Berlin, Leipzig, 1908.

²⁸ **Capmany y de Montpalau A. de**, Libro del Consulado del Mar, Barcelona, 1965. **Palleja C. de**, Consulado del Mar de Barcelona, Barcelona, 1732. **Pardessus J. M.**, Us et coutumes de la mer ou collection des usages maritimes des peuples de l'antiquité et du Moyen Age, t. 2, Paris, 1847.

²⁹ **Les registres de Nicolas IV**, Recueil des bulles de se Pape, pub. par Langlois M., Fascicule VI // Bibliothèque des Ecoles françaises d'Athènes et de Rome, V. 6, Paris, Ernest Thorin, 1891. **Jean XXII (1316-1334)**, Lettres Communes, analysées d'après les registres dits d'Avignon et du Vatican par Mollat G., t. IV // Bibliothèque des Ecoles françaises d'Athènes et de Rome, Paris, 1910. **Benoit XII (1334-1342)**, Lettres closes, patentes et curiales, pub. par Daumet G., Fascicule I // Bibliothèque des Ecoles françaises d'Athènes et de Rome, Paris, 1899. **Benoit XII (1334-1342)**, Lettres Communes, analysées d'après les registres dits d'Avignon et du Vatican par Vidal J., t. I // Bibliothèque des Ecoles françaises d'Athènes et de Rome, Paris, 1903.

³⁰ **Ալիշան Ղ.**, Սիսուան, Վենետիկ, 1885: **Նույնի՝** Հայ-Վենետ, Վենետիկ, 1896:

կարևորագույն բազմաթիվ սկզբնաղբյուրներ չունենալով հանդերձ, հեղինակը կարողացել է խնդիրը համակողմանի քննել: Հատկապես արժեքավոր են Այա-Թավիզ մայրուղու, Կիլիկյան Հայաստանի և եվրոպական պետությունների միջև առևտրական փոխհարաբերությունների վերաբերյալ դիտարկումները³¹:

Միջազգային առևտրի բնագավառում Կիլիկիայի հայկական պետության հարկային քաղաքականությունը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական այլ բնույթի հարաբերությունները հանգամանալից վերլուծվել են Ս. Բռնազյանի արժեքավոր մենագրությունում³²:

Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրի պատմության տարբեր հարցերին անդրադարձել են նաև Դ. Մանանդյանը³³, Ա. Տիրացյանը³⁴, Ա. Սուքիասյանը³⁵, Յու. Բարսեղովը³⁶ և Վ. Զյուրբջյանը³⁷: Կիլիկյան Հայաստանի դրամների ուսումնասիրության առումով մեծ ավանդ ունի Զ. Պտուկյանը³⁸:

Ատենափոստությունը շարադրելիս չափազանց օգտակար են եղել նաև Դ. Բարթիկյանի³⁹, Ժ. Ղեղեյանի⁴⁰, Կ. Սուքաֆյանի⁴¹, Լ. Տեր-Պետրոսյանի⁴², Ա. Բոզոյանի⁴³ և Վ. Տեր-Ղևոնդյանի⁴⁴ մենագրությունները ու հոդվածները:

Եվրոպական և ընդհանրապես համաշխարհային պատմագիտության մեջ նույնպես Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրի պատմությանը նվիրված ամբողջական աշխատություն չի ստեղծվել: Սակայն XIX-XX դդ. օտարազգի միջնադարագետների XIII-XIV դդ. միջերկրածովյան և սևծովյան

³¹ **Микаелян Г.**, История Киприкийского Армянского государства, Е., 1952.

³² **Բռնազյան Ա.**, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան Հայկական պետությունում XII-XIV դարերում:

³³ **Манандян Я.**, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Е., 1954.

³⁴ **Տիրացյան Ա.**, Կիլիկյան Հայկական պետության սեփական նավատորմի ունենալու հարցի շուրջ, «Էջմիածին», 1957, N Է-Ը, էջ 43-48:

³⁵ **Սուքիասյան Ա.**, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դարեր), Ե., 1978:

³⁶ **Барсегов Ю.**, Борьба Киприкийской Армении против пиратства в Средиземном море, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, N 3, էջ 71-84: **Նույնի՝** Отказ армян от «берегового права», «Պատմա-բանասիրական հանդես», 1971, N 1, էջ 95-110:

³⁷ **Զյուրբջյան Վ.**, Հայկական Կիլիկիա, Նու Երոթ, 1919:

³⁸ **Պտուկյան Զ.**, Կիլիկեան Հայաստանի դրամները, Վիեննա, 1963:

³⁹ **Բարթիկյան Դ.**, Այուրեղ Կոստեի հայկական գաղութի վերաբերյալ // Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա Ե., 2002, էջ 493-503: **Նույնի՝** Հունական միջնադարյան արխիվային փաստաթղթեր Բյուզանդական կայսրության տարածքում հայոց ներկայության մասին (XI-XIV դդ.) // Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Գ, Ե., 2006, էջ 127-170:

⁴⁰ **Dedeyan G.**, Les Arméniens entre Grecs, Musulmans et Croisés, Etude sur les pouvoirs Arméniens dans le Proche-Orient méditerranéen (1068-1150), V. 1, Aux origines de l'état Ciliciens: Philarete et les premier Roubeniens, Lisbonne, 2003. V. 2, De l'Euphrate au Nil: Le réseau diasporique, Lisbonne, 2003.

⁴¹ **Սուքաֆյան Կ.**, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Ե., 2001: **Նույնի՝** La Catalogne et le royaume arménien de Cilicie (XIII^e-XIV^e siècles) // L'expansió catalane a la Mediterrania a la Baixa Edad Mitjana, Barcelona, 1999, p. 105-119.

⁴² **Տեր-Պետրոսյան Լ.**, Խաչակիրները և հայերը, հ. Ա, Ե., 2005, հ. Բ, Ե., 2007:

⁴³ **Bozoyan A.**, Le cadre juridique du commerce de la Cilicie arménienne // Arménie entre Orient et Occident, Paris, 1996, p. 128-133.

⁴⁴ **Տեր-Ղևոնդյան Վ.**, Կիլիկյան Հայաստանը և Սերժավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, Ե., 1994:

առևտրի մասին գրած մեծաքանակ աշխատություններում Հայոց թագավորությունը եղել է ուշադրության շրջանակում:

Կիլիկիայի սոցիալ-տնտեսական, այդ թվում և միջազգային առևտրական հարաբերությունների ուսումնասիրության մեջ մեծ ավանդ ունի Վ. Լանգլուան: Բացառիկ են հասկապես եվրոպական բազմաթիվ արխիվներում նրա կատարած հետազոտությունները, որոնց միջոցով լուսաբանվել են սույն թեմային առնչվող տարաբնույթ խնդիրներ⁴⁵:

Վ. Հեյդի՝ XIX դ. վերջին գրած «Լևանտի առևտուրը միջին դարերում» երկհատոր աշխատությունը հիմնարար նշանակություն ունի միջնադարյան առևտրատնտեսական հարաբերությունների յուրաքանչյուր հետազոտողի համար և այսօր էլ չի կորցրել իր կարևորությունը: Հեյդինակը բավական համեստ նյութերի հիման վրա կարողացել է սեղմ, սակայն հնարավորինս ամփոփ ներկայացնել Կիլիկյան Հայաստանի դերակատարությունը Լևանտի առևտրի համակարգում⁴⁶:

Լևանտի առևտրի պատմության XX դ. երկրորդ կեսի հանրահայտ մասնագետներից է Է. Աշտորը, որի «Լևանտի առևտուրը ուշ միջին դարերում» մեծագրությունն անգնահատելի արժեք է միջնադարյան տնտեսության պատմության ուսումնասիրության բնագավառում: Հատկապես կարևորվում են պատմաբանի գնահատականները միջերկրածովյան առևտրում Այասի և Կիլիկյան Հայաստանի դերակատարությանը⁴⁷:

XX դ. վերջին երեսնամյակից մինչև XXI դ. սկիզբն ընկած ժամանակամիջոցում արևմտամիտոպական հեղինակավոր համալսարանների հայտնի միջնադարագետներից շատերն առանձին հոդվածներով հատուկ անդրադարձել են Այասի և ընդհանրապես Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրին առնչվող որոշ խնդիրներին: Հատկապես բովանդակալից են Այասի ջենովական վաճառականության վերաբերյալ Լ. Բալլետտոյի հետազոտությունները⁴⁸: Առանձնակի հիշատակության են արժանի Կ. Օթթեն-Ֆրուի մի շարք հոդվածները, որոնցում բավական հանգամանորեն քննված են Կիլիկյան Հայաստանում օտարերկրյա վաճառականության գործունեությանը վերաբերող տարբեր խնդիրներ⁴⁹: Գրեթե նույն հարցերն են արծարծվում նաև

⁴⁵ **Langlois V.**, Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie, St. Pétersbourg, 1860.

⁴⁶ Սեր կողմից օգտագործվել է 1885-1886 թթ. գերմաներեն լույս տեսած սույն աշխատության 1967 թ. ֆրանսերեն վերահրատարակությունը: **Heyd W.**, Histoire du commerce du Levant au moyen âge, t. I, Amsterdam, 1967, t. II, Amsterdam, 1967.

⁴⁷ **Ashtor E.**, Levant Trade in the Later Middle Ages, Princeton, New Jersey, 1983.

⁴⁸ **Balletto L.**, Genovesi a Laiazzo: il caso di Cerasia Ciliiana (1279) // Atti dell'Accademia Ligure di Scienze e Lettere, XLII, Genova, 1985, p. 188-196. **Նույնի՝** Nuovi documenti sui genovesi a Laiazzo // Studi Genovesi, n.s. 4, 1986, p. 39-44. **Նույնի՝** Il commercio Armeno-Italiano (secoli XIII-XV) // Roma-Armenia, Roma, 1999, p. 184-188.

⁴⁹ **Otten-Froux C.**, L'Alas dans le dernier tiers du XIII^e siècle d'après les notaires génois // Medieval Levant. Studies in Memory of Eliyahu Ashtor (1914-1984), Haifa, 1988, p. 147-169. **Նույնի՝** La Cilicie arménienne dans le réseau commercial pisan en Méditerranée orientale // Gli Armeni lungo le strade d'Italia, Atti del convegno internazionale, Pisa, Roma, 1997, p. 1-13. **Նույնի՝** Les échanges commerciaux // Le Royaume Arménien de Cilicie XII^e-XIV^e s., ed. Mutafian C., Paris, 1999, p. 119-125.

Պ. Ուսսինի աշխատություններում⁵⁰: Կիլիկյան Հայաստանի և Կիպրոսի թագավորության միջև առևտրական փոխհարաբերություններն ուսումնասիրելիս առանձնապես օգտակար են եղել Ս. Բլիզնիկի⁵¹, Կ. Օթթեն-Ֆրոկի⁵² և Ն. Կուրեաի⁵³ հետազոտությունները:

Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական նավագնացությունը, եվրոպական քաղաքների հետ առևտրական շփումները և ապրանքաշրջանառությունը հետազոտելիս օգտակար են եղել Ֆ. Լեյնի⁵⁴, Ջ. Պիստարինոյի⁵⁵, Մ. Բալարի⁵⁶, Ռ. Ս. Լուպեզի⁵⁷, Դ. Ստոկլիի⁵⁸, Դ. Ջեյքոբիի⁵⁹, Դ. Աբուլաֆիայի⁶⁰, Մ. Սալցգաուլի⁶¹, Ջ. Փոլայորի⁶², Կ. Ուեյերսոնի⁶³ գրքերն ու հոդվածները:

⁵⁰ **Racine P.**, Marchands placentins a l'Aïas a la fin du XIII^e siècle // Byzantinische Forschungen, IV, 1972, p. 195-205. **Նույնի՝** L'Aïas dans la seconde moitié du XIII^e siècle // Rivista di bizantinistica, N 2, 1992, p. 173-206. **Նույնի՝** Images de la colonisation placentine a l' Aïas et Caffa a la fin du XIII^e siècle // Rivista di bizantinistica, N 3, 1993, p. 327-354.

⁵¹ **Близнак С.**, Мир торговли и политики в королевстве Крестоносцев на Кипре, 1192-1373, М., 1994.

⁵² **Otten-Froux C.**, Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie d'après les actes notariés (1270-1320) // L'Arménie et Byzance, Paris, 1996, p. 157-179.

⁵³ **Coureas N.**, Genoese Merchants and the Export of Grain from Cyprus of Cilician Armenia: 1300-1310 // «Հասկ» հայագիտական հանդես, նոր շրջան ժԱ. տարի, Անիլիաս-Լիբանան, 2009, էջ 319-338:

⁵⁴ **Lane F.**, Venice. A Maritime Republic, London, 1973. **Նույնի՝** Venetian Merchant Galleys, 1300-1334: Private and Communal Operation // Speculum, N 2, V. 38, Cambridge, Massachusetts, 1963, p. 179-205.

⁵⁵ **Pistarino G.**, Dal decline sul mare di Levante tra cristiani ed islamici alla conquista del mar Nero // Genovesi d'Oriente, a cura di Pistarino G., Genova, 1990, p. 95-141. **Նույնի՝** Economia e società del Mediterraneo Genovese nel tempo degli orizzonti aperti // I signori del mare, a cura di Pistarino G., Genova, 1992, p. 97-154.

⁵⁶ **Balard M.**, L'emigrazione monferrino-piemontese in Oriente (sec. XII-XIV) // Atti del congress internazionale "Dai feudi Monferrine e dal Piemonte ai nuove oltre gli oceani", a cura di L. Balletto, Alessandria, 1993, p. 249-261. **Նույնի՝** La place de Famagoste génoise dans le Royaume des Lusignan (1374-1464) // Les Lusignan et l'Outre-mer, Poitiers, 1993, p. 16-27. **Նույնի՝** Les transports maritimes génois vers la Terre Sainte // I Comuni italiani nel regno crociato di Gerusalemme, a cura di G. Aivaldi, B. Z. Kedar, Collana storica di fonti e studi, 48, Genova, 1986, p. 114-175.

⁵⁷ **Lopez R. S.**, Storia delle colonie genovesi nel Mediterraneo, Bologna, 1938. **Նույնի՝** Medieval Trade in the Mediterranean World, New York, 1955.

⁵⁸ **Stöckly D.**, Le système de l'incanto des galées du marché à Venise (fin XIII^e-milieu XV^e siècle), Leiden, 1995.

⁵⁹ **Jacoby D.**, A Venetian Manual of Commercial Practice from Crusader Acre // I Comuni italiani nel regno crociato di Gerusalemme, a cura di G. Aivaldi, B. Z. Kedar, Collana storica di fonti e studi, 48, Genova, 1986, p. 401-429. **Նույնի՝** Dalla materia prima ai drappi tra Bisanzio, il Levante e Venezia: la prima fase dell'industria serica veneziana // La seta in Italia dal Medioevo al Seicento. Dal baco al drappo, eds. Molà L., Mueller R. C., Zanier C., Venezia: Marsilio, 2000, p. 265-304. **Նույնի՝** Mercanti genovesi e veneziani e le loro merci nel Levante crociato // Genova, Venezia, il Levante nei secoli XII-XIV, Atti del Convegno, Genova - Venezia, 10-14 marzo, 2000, a cura di G. Ortalli, D. Puncuh, Atti della Società Ligure di Storia Patria, Genova, 2001.

⁶⁰ **Abulafia D.**, The Levant Trade of the Minor Cities in the Thirteenth and Fourteenth Centuries: Strengths and Weaknesses // Commerce and Conquest in the Mediterranean, 1100-1500, Variorum Collected Studies Series, Great Yarmouth, Norfolk, 1993, XI, p. 183-202. **Նույնի՝** The

Միջնադարյան առևտրի կառուցվածքի բազմակողմանի ուսումնասիրության համար առանձնահատուկ կարևորություն են ունեցել Ա. Կարպոլի մեծագույն մենագրություններն ու հոդվածները⁶⁴:

Եվրոպայի տնտեսական պատմության ուսումնասիրության առումով աստեմատության համար օգտակար են եղել Ա. Ջիլելետոլի⁶⁵, Ջ. Լուցցատոլի⁶⁶, Վ. Ռուտենբուրգի⁶⁷ և Գ. Տուշինայի⁶⁸ աշխատությունները:

Այսպիսով, աստեմատությունում օգտագործված սկզբնաղբյուրները ժամանակագրական առումով ընդգրկում են XIII-XIV դդ.: Դրանց մանրագնին հետազոտությունը թույլ է տվել հանգամանորեն լուսաբանել Կիլիկյան Հայաստանում ընթացած միջազգային առևտրի պատմության հիմնական խնդիրները: Աշխատության շարադրանքն իրականացվել է նաև հայկական և օտարերկրյա պատմագիտական գրականության լայն օգտագործմամբ:

ԱՏԵՆԱԽՆՈՒԹՅԱՆ ԿՈՌԻՑՎԱԾՔԸ ՈՒ ԲՈՎԱՆՈՒԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացվող աստեմատությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒ հիմնավորվել են թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, սահմանվել են աստեմատության նպատակը, խնդիրները, աշխատանքի մեթոդաբանությունն ու գիտական նորույթը և ներկայացվել օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության տեսությունը:

Merchants of Messina: Levant Trade and Domestic Economy // Commerce and Conquest in the Mediterranean, 1100–1500, Variorum Collected Studies Series, Great Yarmouth, Norfolk, 1993, XII, p. 196-212. **Նույնի՝** Narbonne, the Lands of the Crown of Aragon, and the Levant Trade 1187-1400 // Commerce and Conquest in the Mediterranean, 1100-1500, Variorum Collected Studies Series, Great Yarmouth, Norfolk, 1993, XIV, p. 189-207. **Նույնի՝** The Anconitan Privileges in the Kingdom of Jerusalem and the Levant Trade of Ancona // Commerce and Conquest in the Mediterranean, 1100-1500, Variorum Collected Studies Series, Great Yarmouth, Norfolk, 1993, XIII, p. 525-570.

⁶¹ **Mazzaoui M.**, The Italian Cotton Industry in the Later Middle Ages, 1100-1600, Cambridge, 1981.

⁶² **Pryor J.**, The Origins of the *Commenda* Contract // *Speculum*, V. LI, N 1, Cambridge, Massachusetts, 1977, p. 5-37.

⁶³ **Reyerson K.**, The Art of the Deal: Intermediaries of Trade in Medieval Montpellier, Boston, 2002. **Նույնի՝** Business, Banking, and Finance in Medieval Montpellier, Toronto, 1985.

⁶⁴ **Карпов С.**, Итальянские морские республики и Южное Причерноморье в XIII-XV вв.: проблемы торговли, М., 1990. **Նույնի՝** Трапезундская империя и Западноевропейские государства в XIII-XV вв., М., 1981. **Նույնի՝** Контракт комменды в итальянской торговле в Южном Причерноморье (XIII-XV вв.) // Византийский временник, Т. 48, 1987, с. 23-32.

Նույնի՝ Кредит в системе итальянской торговли в Южном Причерноморье (XIII-XV вв.) // Византийский временник, т. 49, 1988, с. 40-49.

⁶⁵ **Дживелегов А.**, Торговля на Западе в средние века, СПб., 1904.

⁶⁶ **Луццатто Дж.**, Экономическая история Италии. Античность и средние века, М., 1954.

⁶⁷ **Руленбург В.**, Очерк из истории раннего капитализма в Италии: флорентийские компании XIV века, Москва-Ленинград, 1951.

⁶⁸ **Тушина Г.**, Из истории средиземноморских торговых объединений (Античность и средние века) // Страны Средиземноморья в эпоху феодализма, Вып. 2, Горький, 1975, с. 3-28.

Առաջին գլուխը՝ «ԿԻԼԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «ԿԻԼԿԻԱՅԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ», նկարագրվում են Կիլիկիայի աշխարհագրական դիրքը, կլիմայական պայմանները, օգտակար հանածոները, բուսական ու կենդանական աշխարհը՝ որպես կարևոր նախապայման միջազգային առևտրի զարգացման համար:

Երկրորդ ենթագլխում՝ «ԱՌԵՎՏՐՈՒԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ», անդրադարձ է կատարվում Կիլիկյան Հայաստանում խաչածնակող առևտրական ուղիներին:

Տնտեսաաշխարհագրական նպաստավոր դիրքի շնորհիվ Կիլիկյան Հայաստանը հայտնվել էր առևտրական կարևորագույն ճանապարհների հանգուցակետում: Այստեղ խաչվում էին աշխարհի չորս կողմերից ծովող թե՛ ծովային, և թե՛ ցամաքային ուղիները: XIII-XIV դդ. Հարավային Եվրոպայի և Ասիայի միջև առևտրական կապերում առաջնային նշանակություն էր ստացել Այա-Թակիդ ջարականային ճանապարհը: Թակիդից Բաղդադով ու Պարսից ծոցով տնտեսական կապ էր պահպանվում հարավ-արևելյան Ասիայի, իսկ ցամաքային ուղիով՝ Միջին Ասիայի ու Հեռավոր Արևելքի հետ⁶⁹: Բաքերոով զննացող ճանապարհով էլ երգրումը կապվում էր Տրապիզոնի հետ⁷⁰, որի միջոցով Այսար միանում էր սևծովյան ամբողջ ալագանին:

Երրորդ ենթագլխում՝ «ԿԻԼԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՋԵՐԿՐԾՈՒԿՅԱՆ ԱՌԵՎՏՐՈՒԿԱՆ ԱՆՎԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ», ներկայացվում է Կիլիկյան Հայաստանի նավահանգիստների ներգրավվածությունը միջազգային առևտրական նավագնացության մեջ:

XIII դ. սկզբից աշխարհագրական նպաստավոր դիրքի շնորհիվ Կիլիկյան Հայաստանն արագորեն ընդգրկվեց Արևելքի և Արևմուտքի միջև ձևավորվող ծովային առևտրական հիմնական ուղիների համակարգում:

Կիլիկյան Հայաստանը ընդգրկված էր Վենետիկի Հանրապետության առևտրական նավագնացության 5 հիմնական ուղղություններից մեկի՝ Oltremare-ի (Անդրծով) համակարգում⁷¹:

Բացի կարճ ուղևորություններից, որոնք ընթանում էին Արևելյան Միջերկրականի նավահանգիստների միջև, շատ նավեր, Կիլիկյան Հայաստանում նոր ապրանքներով համալրվելուց հետո, շարունակում էին իրենց ճանապարհը դեպի Ջենովա, Բարսելոնա, Հարավային Ֆրանսիա և այլ ուղղություններով⁷²:

⁶⁹ **Микаелян Г.**, նշվ. աշխ., էջ 350-361:

⁷⁰ **Racine P.**, *Images de la colonisation placentine a l' Aias et Caffa a la fin du XIIIe siecle*, p. 354.

⁷¹ **Lane F.**, *Venetian Merchant Galleys, 1300-1334*, p. 185-186. **Stöckly D.**, նշվ. աշխ., էջ 119: **Ashtor E.**, նշվ. աշխ., էջ 55:

⁷² **Balard M.**, *Notai genovesi in Oltremare*, A., N 20, 22, 149. **Նույնի՝** *Notai genovesi in Oltremare*, B., I N 22. II N 18, 25, 55, 70, 73, 135. III N 6, 28, 29, 30, 63. **Polonio V.**, նշվ. աշխ., N 5, 88, 89, 101, 127, 183, 205, 207, 211, 217, 220, 223, 225, 257, 282: **Pavoni R.**, *Notai genovesi in Oltremare*, A., N 18, 236. **Նույնի՝** *Notai genovesi in Oltremare*, B., N 9, 86, 151, 163, 169, 170, 171, 181, 184, 194, 248. **Coureas N.**, *Genoese Merchants and the Export of Grain from Cyprus of Cilician Armenia: 1300-1310*, p. 329-330.

Ծովային առևտրական համակարգում ընդգրկվելու առաջին իսկ տարիներից Կիլիկյան Հայաստանում սահմանվել էին միջազգային նավագնացության անվտանգությունն երաշխավորող դրոշ օրենքներ, որոնցից առանձնահատուկ հիշատակության է արժանի «մերձափնյա իրավունքի» չկիրառման օրենքը: Դեռևս Մխիթար Գոշն իր «Ղատաստանագրքում» դատապարտել է այն, մինչդեռ այդ ժամանակաշրջանում «մերձափնյա իրավունքը» լայնորեն օգտագործվում էր եվրոպական շատ երկրներում⁷³: Լևոն Ա-ը (որպես Կիլիկյան Հայաստանի իշխան՝ 1187-1198, որպես թագավոր՝ 1198-1219) Կենտրոնի և Ջենովայի Հանրապետություններին 1201 թ. շնորհած արտոնագրերում հրաժարվել է այդ իրավունքի կիրառումից⁷⁴:

Երկրորդ գլուխը՝ «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ», բաղկացած է երեք ենթագլուխից:

Առաջին ենթագլխում՝ «ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿԱՆԻՆ ԵՎ ԱՊՐԱՆՔԱՆԻՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՀՐԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ», վերլուծության են ենթարկված Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրական ասրանքաշրջանառությունն ու դրանում ներգրավված տեղական, ինչպես նաև ներմուծված ապրանքների տեսականին:

Ասիայի խորքերից Այաս ներկրվող ապրանքների կուտակման գլխավոր կենտրոնը Թալիզն էր⁷⁵: Հնդկաստանից ու Հարավարևելյան Ասիայի այլ վայրերից Կարմիր ծովով Եգիպտոս և Ասորիք բերվող համեմունքների ու դեղանյութերի մի զգալի քանակությունը մինչ Եվրոպա տեղափոխելն ուղղվում էր Այաս⁷⁶:

Նոտարական սկզբնաղբյուրներում և Ֆրանչեսկո Պեգոլոտտիի ու Ջիբալդոնե դա Կանալի վաճառականական ձեռնարկներում հիշատակված են Այասում վաճառված համեմունքների, դեղանյութերի, խեժերի բացառիկ հարուստ տեսականի⁷⁷:

Տարաբնույթ սկզբնաղբյուրներում բազմիցս խոսվում է Կիլիկյան Հայաստանում մշակված բամբակի բացառիկ բարձր որակի մասին⁷⁸: Կիլիկյան Հայաստանի շուկաներում վաճառվում էին հումքային մետաքսի բազմաթիվ տեսակներ⁷⁹:

Տեղական արտադրանքներից մեծ համբավ ուներ այծի, ուղտի և ոչխարի բրդից պատրաստված ցիսի (եվրոպացիների կողմից կամելոտ) կոշված

⁷³ Մխիթար Գոշ, Գիրք ղատաստանի, Ե., 1975, էջ 126:

⁷⁴ Барсегов Ю., Отказ армян от «берегового права», с. 101-109. Սուքիասյան Ա., նշվ. աշխ., էջ 226:

⁷⁵ Марко Поло, Книга, М., 1956, с. 60. Манандян Я., նշվ. աշխ., էջ 298:

⁷⁶ Բսկոլոսն, նշվ. աշխ., էջ 75: Lane F., Venice. A Maritime Republic, p. 130. Rey E., Les colonies Franques de Syrie aux XI^{me} et XII^{me} siecles, Paris, 1883, p. 190.

⁷⁷ Pegolotti, p. 59. Dotson J. E., Merchant Culture in Fourteenth-Century Venice, p. 161-163. Otten-Froux C., Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie, p. 171.

⁷⁸ Pegolotti, p. 366-367. Marino Sanuto, p. 33.

⁷⁹ Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 17, 83. Jacoby D., Silk Economics and Cross-Cultural Artistic Interaction // Byzantium, the Muslim World, and the Christian West, Dumbarton Oaks Papers, 58, 2004, p. 234.

գործվածքը⁸⁰: Կիլիկիայի շուկաներում վաճառվող եվրոպական ապրանքների հաշվեկշիռում մահուղն ու կտավն առաջնային նշանակություն ունեին⁸¹:

Առևտրական սերտ կապերի շնորհիվ Կիլիկյան Հայաստանը կամուրջի դեր էր կատարում Հարավային Եվրոպայի և Իլխանության միջև բանկարժեք մետաղների շրջանառության համար: Ֆրանչեսկո Պեգոլոտտին թվարկում է Եվրոպայում արդյունահանված արծաթի 9 տեսակ, որոնք օգտագործվում էին Այասի դրամահատարանում⁸²:

Օտարերկրյա վաճառականները կիլիկյան շուկաներից ձեռք էին բերում նաև տեղական հավ, ձու, մրգեր, բանջարեղեն, շաքար, չամիչ, խաղողի հյութ, գինի, մեղր և զանազան այլ սննդամթերք⁸³:

Կիլիկյան Հայաստանը հացահատիկի միջազգային առևտրում առավելապես ներկայանում էր որպես տարածցիկ երկիր: Այն ներմուծվում էր ինչպես մերձսևծովյան շրջաններից, այնպես էլ Եվրոպայից՝ հատկապես Հարավային և Կենտրոնական Իտալիայից⁸⁴: Այսան Արևելյան Միջերկրականում ստրկավաճառության կարևոր կենտրոններից էր⁸⁵:

Երկրորդ ենթագլխում՝ «ՄԻՋԵՐԿՐԾՈՎՅԱՆ ԱՌԵՎՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՐԱՆԱԿԱՆԵՐԸ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ», անդրադարձ է կատարվել Կիլիկյան Հայաստանում ընթացող միջազգային առևտրական ապրանքաշրջանառության մեջ կիրառված բազմաբնույթ գործարքների ու պայմանագրերի, ինչպես նաև դրանց համար օգտագործված տարբեր փաստաթղթերի հանգամանալի հետազոտությանը:

Ինչպես միջերկրածովյան առևտրում, այնպես էլ Կիլիկյան Հայաստանում առավել տարածված գործարքի տեսակը կոմմենդան էր: Սա յուրահատուկ բաժնետիրական, կարծածակետ պայմանագրային ընկերություն էր, որտեղ գործընկերներից մեկը՝ կոմմենդատորը, գործարքում կապիտալի միակ կամ էլ զլխավոր ներդրողն էր: Սյուս մասնակիցն անվանվում էր տրակտատոր, որը ներդրված միջոցները ստանալուց հետո առևտրական գործունեություն պետք է ծավալեր նախապես պայմանավորված որևէ վայրում: Վերադառնալուն պես՝ տրակտատորը պարտավոր էր վերադարձնել կոմմենդատորի ներդրած գումարը, ինչպես նաև շահույթի մի մասը՝ ըստ նախապես պայմանավորված բաշխման հարաբերության⁸⁶:

Կիլիկյան Հայաստանում առևտրի կազմակերպման հիմնական միջոցներից մեկը կրեդիտը կամ փոխառությունն էր: XIII-XIV դդ. միջազգային առևտրի վարկավորման, ինչպես նաև վաճառականների միջև իրականացված

⁸⁰ Heyd W., նշվ. աշխ., հ. II, էջ 704-705:

⁸¹ Balletto L., Notai genovesi in Oltremare, B. N 27, 29, 30, 31, 47, 49, 50, 53, 130, 134, 135, 136, 138.

⁸² Pegolotti, p. 60. Spufford P., Money and Its Uses in Medieval Europe, Cambridge, 1988, p. 152-153.

⁸³ Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 47, 47a. Langlois V., Le Trésor des chartes d'Arménie, p. 155-156. Zibaldone, p. 62. Ալիշան Ղ., Սխուման, էջ 13, 369:

⁸⁴ Otten-Froux C., Les relations économique entre Chypre et le Royaume Arménien de Cilicie, p. 172.

⁸⁵ Balletto L., Notai genovesi in Oltremare, A. N 13, 15, 80, 102, 103. Marino Sanuto, p. 27-29.

⁸⁶ Лущатто Дж., նշվ. աշխ., էջ 105, 367-369: Карпов С., Итальянские морские республики и Южное Причерноморье, с. 179-180.

փոխադարձ հաշվարկների առավել տարածված եղանակը կամքին էր: Միջնադարում լայն կիրառություն գտած փոխանցումների այս համակարգը թույլ էր տալիս դրանակալն և այլ տեսակի միջոցները փոխանցել առանց դրանք անմիջականորեն տեղափոխելու, իրականացնել անկանխիկ վճարումներ և այլն:

Երրորդ ենթագլխում՝ «ԿԻԼԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՐԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐՈՒՄ», քննվում են Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրի բնագավառում տարված հարկային քաղաքականությունը:

Կիլիկյան Հայաստանում հարկերի գանձումն իրականացնում էր պետության ֆինանսները կառավարող պոռքսիմոս գործակալությունը: Շատ քաղաքներում ու սահմանամերձ անցակետերում տաղակալվել էին մաքսային վարչություններ, որոնք սկզբնաղբյուրներում անվանված են բաժտուն կամ բայժատուն ձևերով: Ամենախոշոր բաժտները գտնվում էին Այասում, ինչպես նաև Գուզլակ և Պորտելլա անցակետերում: Դրանցում պոռքսիմոսը ներկայացնում էին հատուկ պաշտոնյաները, որոնց կոչում էին բաժտան կասպիտան կամ մինասյան (միրաբան, miraban)⁸⁷:

Կիլիկյան Հայաստանում սահմանված տարանցիկ մաքսատուրքերն ամենացածրերից էին սևծովյան և միջերկրածովյան ավազաններում⁸⁸: Տարանցիկ մաքսատուրքից զատ, օտարազգի վաճառականները Կիլիկյան Հայաստանում վճարում էին տարաբնույթ հարկերի մի ամբողջ տեսականի՝ ոսկուց, արծաթից և թանկարժեք քարերից գանձվող հարկ, ցենզարիա (միջնորդափարկ), պոբորագիուս (հարկ օտարերկրյա նավերից՝ Կիլիկիայի նավահանգիստներում խարիսխ օգելու համար), տաբուլագիուս (հարկ Կիլիկիայի շուկաներում վաճառատեղան ունենալու համար), էրզացիո (հարկ, որը գանձվում էր Կիլիկիայի քաղաքներում օտարազգի պանդոկապաններից ու զինեմաճառներից), ցերկա (հարկ, որն օտարազգի վաճառականը վճարում էր Կիլիկիայի թագավորական ոստիկանությանը՝ իր գողացված ապրանքը վերադարձնելու համար) և այլ հարկատեսակներ⁸⁹:

Երրորդ գլուխը՝ «ՎԱՆՈՒԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ», բարկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «ՀԱՅ ՎԱՆՈՒԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ», արտացոլված է Կիլիկիայի հայ վաճառականների գործունեության ընդհանուր բնութագիրը:

Կիլիկյան Հայաստանի հայ վաճառականության գործունեության ուսումնասիրության վերաբերյալ սկզբնաղբյուրային հենքը խիստ սահմանափակ է: Բացի այն, որ հայ պատմիչներն իրենց գործերում նշյալ խնդրին առնչվող վկայություններ չեն թողել, հայազգի վաճառականները չափազանց աղքատիկ են ներկայացված նաև եվրոպական սկզբնաղբյուրներում:

Ամենայն հավանականությամբ, հայ վաճառականների համար առաջնային նշանակություն է ունեցել ցամաքային, այն է՝ հիմնականում Այա-Թավրիզ

⁸⁷ **Բոնազյան Ա.**, նշվ. աշխ., էջ 75, 277-279: **Սուփաայան Ա.**, նշվ. աշխ., էջ 111:

⁸⁸ **Pegolotti**, p. 60.

⁸⁹ **Dulaurier E.**, նշվ. աշխ., էջ XCVI-XCIX: **Բոնազյան Ա.**, նշվ. աշխ., էջ 279-282: **Քիլոբան Կ.**, նշվ. աշխ., էջ 52:

մայրուղով ընթացող առևտուրը, որն իր մեջ ներառում էր բուն Հայաստանի խոշոր քաղաքները: Այս քարավանային ճանապարհի հիմնական կայանները Խոյ, Նախիջևան, Կարին, Երզնկա, Սեբաստիա և հայկական շատ այլ քաղաքներն էին:

Հայ վաճառականներն ու նավատերերը լայն հնարավորություններ ունեին նաև միջնորդական դեր կատարել եվրոպացիների և մանլուքների միջև ընթացող առևտրական շփումներում, ինչի մասին բացառիկ վկայություններ է պարունակում 1285 թ. հայ-մանլուքյան խաղաղության պայմանագիրը⁹⁰:

Երկրորդ ենթագլխում՝ «OSUNLEZAH ԿԱՆԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ», լուսաբանվում է Կիլիկյան Հայաստանում օտարազգի վաճառականների գործունեությունը, նրանց համայնքային կյանքի բնութագիրը և այլ խնդիրներ:

XIII-XIV դդ. միջազգային առևտրի զարգացմանը զուգընթաց, Կիլիկյան քաղաքներում արագորեն մեծանում էր վաճառականական բնակչության թվաքանակը և փոխվում էր ազգային ու սոցիալական կազմը:

Կիլիկյան Հայաստանում առևտրական գործունեություն ծավալած եվրոպացի վաճառականների թվին հարկ է դասել ոչ միայն իտալացի, ֆրանսիացի, իսպանացի և եվրոպական այլ պետությունների ու քաղաքների հպատակներին, այլև խաչակրաց իշխանություններից Կիլիկյան Հայաստան թափանցած «լատին» բնակչությանը, ինչպես նաև հոգևոր-ասպետական միաբանությունների անդամներին:

Արդեն XIII դ. սկզբից Կիլիկիայի Հայկական պետությունում սկսեց ձևավորվել ջենովական և վենետիկյան վաճառականական բնակչություն: Հայ արքաների շնորհած արտոնագրերով իտալացիներին հնարավորություն էր ընձեռվում բնակություն հաստատել Այասում, Սիսում, Մամեստիայում, Տարսոնում և Ադանայում, որոնցում հասկացվում էին տարածքներ եկեղեցիներ, տներ, հյուրանոցներ և դատարան կառուցելու համար⁹¹:

Կիլիկյան Հայաստանում վենետիկյան և ջենովական համայնքների կառավարման բոլոր լծակները տնօրինում էր ազնվականներից կազմված վերնախավը, որոնց ներկայացուցիչները Վենետիկի և Ջենովայի ազնվատոհմիկ ամենահայտնի ընտանիքների սերունդներից էին: Վերջիններիս բաժին էր ընկնում նաև կիլիկյան քաղաքներում եվրոպացիների իրականացրած ներդրումների մեծ մասը: Վենետիկցիներից և ջենովացիներից գատ Կիլիկյան Հայաստանում բավական մեծ թիվ էին կազմում Լիզուրիայի և Պիենունտի քաղաքներից ժամանած վաճառականները: Քիչ չէին նաև Պիսչենցա և Անկոնա քաղաքի ներկայացուցիչները: Իսկ Սիցիլիայի թագավորության (1331 թ.) և ֆլորենտական Բարդի բանկային տան (1335 թ.) հետ կնքվել էին առևտրական առանձին պայմանագրեր⁹²: Արդեն 1270-ական թթ. Այաս այցելում էին նաև կատալոնցիներ⁹³: Կիլիկյան Հայաստանում

⁹⁰ **Բալուրան**, Եզվ. աշխ., էջ 75: **Սուքիայան Ա.**, Եզվ. աշխ., էջ 220-221:

⁹¹ **Langlois V.**, Le Trésor des chartes d'Arménie, p. 105, 109.

⁹² **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, A. N 12, 15, 39, 44, 48, 62, 64, 66, 67, 68, 77, 89, 84, 91, 92, 93, 97. B. N 30, 34, 38, 39, 42, 46, 54, 58, 59, 63, 64, 66, 69, 71, 76, 79, 88, 108, 117, 121, 124, 128. **Otten-Froux C.**, L'Alas dans le dernier tiers du XIII^e siècle, p. 153. **Balard M.**, L'emigration monferrino-piemontese in Oriente (secc. XII-XIV), p. 252.

⁹³ **Mutafian C.**, La Catalogne et le royaume arménien de Cilicie (XIII^e-XIV^e siècles), p. 108. **Otten-Froux C.**, Chypre, un des centres du commerce catalan en Orient, p. 135.

առևտրական ակտիվ գործունեություն էին ծավալել նաև հարավֆրանսիական քաղաքների վաճառականները, որոնք ներկայացնում էին Ֆրանսիայի Պրովանս և Լանգեդոկ-Ռուսիլիոն երկրամասերի խոշորագույն քաղաքները՝ Սոնաբլիեն, Մարսելը, Կիոն և Լարբոննան⁹⁴: Հասարակ վաճառականների հետ միասին սկզբնաղբյուրներից զանազանվում են բազմաթիվ մասնագիտությունների տեր անձինք՝ նոտարներ, քարտուղարներ, գրագիրներ, առևտրական միջնորդներ, բանկիրներ, ուսուցիչներ, բժշկներ, դեղագործներ, վարսավիրներ, նավածեփներ, մոնագործներ, դարբիններ, հյուաններ, թել մանողներ, մահուղի վաճառականներ, մորթեգործներ, դերձակներ, կոշկակարներ, հացթուփներ, խանութպաններ, արքայետահարներ և այլն⁹⁵: Հայ կանանց հետ եվրոպացիների անուսնության օրինակները, նրանց բազմաթիվ կտակ-վհաստաթղթերը վկայում են, որ XIII դ. մինչև XIV դ. 30-ական թվականները օտարազգի վաճառականների մի մեծ խումբ Կիլիկյան Հայաստանում տնական և նույնիսկ մշտական բնակություն է հաստատել:

Չորրորդ գլխում՝ «XIII-XIV դդ. ԱՇԽԱՐՀԱՔԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԵՐԱՅՆԵՐԸ ԵՎ ՄԻՋՆԱԳԱՅԻՆ ԱՆԵՎՏՈՒՐԸ ԿԻԼԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ», վերլուծության է ենթարկված միջազգային առևտրի ազդեցության աստիճանը Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքական հարաբերությունների վրա:

XIII դ. սկզբից, երբ Կիլիկյան Հայաստանը դեռ սկսում էր դառնալ միջերկրածովյան առևտրի համակարգի մի մասը, հարևան պետությունների՝ մասնավորապես Իկոնիայի սուլթանության և Անտիոքի դքսության հետ նրա հարաբերություններում արդեն իսկ զգացվում էր տնտեսական շահի վրա խարսխված քաղաքական որոշակի գործողությունների իրողությունը: Սովորաբար, դրանք արտահայտվում էին կարևոր նավահանգիստների կամ ճանապարհային հանգուցակետերի համար մղվող պայքարով: Բարձր մակարդակի առևտրական կապեր հաստատելով միջերկրածովյան բազմաթիվ պետությունների հետ՝ Հայոց թագավորությունն անխտապիտիկորեն ներգրավվում էր տնտեսական շահով շարժված աշխարհաքաղաքական գործընթացներում: XIII դ. կեսից մամլուքների իշխանության հաստատումից սկսած, Եգիպտոսի սուլթանության արտաքին քաղաքականության գերխնդիրն է դառնում հնարավորինս չեզոքացնել Իլխանության և Եվրոպայի դաշինքի համար նախապայմաններ ձևավորող յուրաքանչյուր գործոն: Հայկական Կիլիկիան այդ բազմակողմանի համագործակցության հիմնական դերակատարներից էր: Ընդ որում, առանձնահատուկ կարևորություն ուներ Կիլիկիայի դերն առևտրական փոխհարաբերություններում, որի հետ մեկտեղ, Հայկական թագավորությունը կամրջի դեր էր կատարում Հուլավյանների տերության և Եվրոպայի միջև ընթացող թանկարժեք մետաղների շրջանառության համար⁹⁶:

Պատկերն ակելի համակողմանի ներկայացնելու համար, նախ և առաջ, հարկ է առանձնացնել քաղաքական այն լծակները, որոնց միջոցով հնարավոր էր լինում ճնշում գործադրել Եգիպտոսի սուլթանության վրա: Այդ ճնշումն

⁹⁴ **Reyerson K.**, The Art of the Deal, p. 38, 40-41.

⁹⁵ **Balletto L.**, Notai genovesi in Oltremare, p. 173, 176, 177, 179, 180, 181, 182, 183, 189, 192, 193, 198, 199, 398, 401, 405, 406, 412, 414, 415, 419, 420. **Ալիշան Ղ.**, Միսուն, էջ 371:

⁹⁶ **Spufford P.**, Money and Its Uses in Medieval Europe, p. 149-156.

իրագործելու շահագրգիռ հիմնական կողմերից մեկն Արևմուտքն էր՝ ի դեմս պապության, Ֆրանսիայի, Անգլիայի, ինչպես նաև հարավեվրոպական առևտրական գերտերությունների: Քաղաքական մյուս բևեռն Իլխանությունն էր, որը կատարի պայքար էր մղում ոչ միայն մամլուքների տերության, այլ նաև Ոսկե Հորդայի և Չաղաթայի ուլուսի դեմ: Քանի դեռ Մերձավոր Արևելքում Հուլյականները ռազմաքաղաքական գերակայություն ունեին, իսկ Արևմուտքը, հանձինս խաչակրաց արշավանքների սպառնալիքների ու արգելքների քաղաքականությամբ իրականացվող տնտեսական շրջափակման, ազդեցիկ քաղաքական լծակներ ունեյր, մամլուքներն իրենց ռազմավարական ծրագրերում ստիպված էին բավական զգուշություն ցուցաբերել: Եթե XIV դ. առաջին քառորդին Եվրոպայում հնչող խաչակրաց արշավանքների կոչերից Եգիպտոսի սուլթանությունը կարող էր նույնիսկ շատ չզգուշանալ, ապա տնտեսական շրջափակումը նրան ճնշելու թերևս ամենաազդեցիկ գործիքն էր: Նման պարագայում Կիլիկիան և Կիպրոսը մամլուքների համար կենսական նշանակության ապրանքների կարևորագույն աղբյուրների էին վերածվում: Արդեն նշել ենք, որ այդ միջնորդական դերում Հայոց թագավորության նշանակությունը շատ մեծ էր: Ինչպես նկատել է Է. Աշթորը, Կիլիկյան Հայաստանը Թավրիզ, Բաղդադ և Պարսից ծոց ուղղվող քարավանային ուղու մեկնակետն էր, իսկ Այսար, ըստ նրա՝ XIII դ. երկրորդ կեսի և XIV դ. առաջին կեսի Լևանտի առևտրի գլխավոր կենտրոնն էր⁹⁷: Չունենալով թանկարժեք մետաղների մեծ ծավալների արդյունահանում՝ Եգիպտոսի սուլթանության պետական զանձարանի համար միջազգային առևտուրը դրանց կուտակման հիմնական միջոցն էր: Այսպես, որն Ալեքսանդրիայի մրցակիցներից էր, ինչը կարող էր նրա հաճախակի ավերումների առիթ դառնալ, միևնույն ժամանակ, Եգիպտոսյան նավահանգիստներին տարատեսակ ապրանքներ մատակարարող կարևորագույն կենտրոններից էր: Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը՝ կարծում ենք, որ Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքական հարաբերությունների վրա միջազգային առևտուրը երկակի ազդեցություն է ունեցել: Աշխարհաքաղաքական որոշակի իրադրության պայմաններում, փաստորեն, այն սանձիչ դեր էր կատարում մամլուքների հարձակումներն ինչ որ չափով կանխելու համար: Նման իրավիճակներ ձևավորվում էին հատկապես Իլխանության հետ նրանց ռազմական բախումներից հետո, ինչպես նաև պապական արգելքների խտացման պատճառով, երբ Եգիպտոսի սուլթանությունը հայտնվում էր սովի ու ճգնաժամի մեջ: Մոնղոլների հետ տարվող պատերազմներից հետո թեև մամլուք սուլթաններն ավերիչ արշավանքներ էին ձեռնարկում Կիլիկյան Հայաստանի դեմ, սակայն դրանց ավարտին, հաճախ, երկարաժամկետ խաղաղության պայմանագրեր էին կնքում Հայոց արքաների հետ: Սակայն XIV դ. 30-ական թվականների վերջին, երբ այլևս չկար մոնղոլական վտանգը, խաչակրաց նոր արշավանքի հիմնական կազմակերպիչներ Ֆրանսիան և Անգլիան, աստիճանաբար ընկղմվում էին Հարյուրամյա պատերազմի (1337-1453) մեջ, իսկ պապության գործածած արգելքների մտրակը սպառել էր պիտանելության ժամկետը՝ Եգիպտոսի սուլթանությունն իր ռազմաքաղաքական նախագծերում զրեթե լիակատար ազատություն էր ստանում: Թեև 1320-ական թվականներին

⁹⁷ Ashfor E., նշվ. աշխ., էջ 104:

սպառնալիցությունը խստացրել էր տնտեսական արգելքների պայմանները, սակայն հետագայում դրանք զնալով մեղմանում են: Հետևաբար, եվրոպացիների և մանյուլքների միջև առևտրական կապերում Կիլիկյան Հայաստանի միջնորդական դերը կորցնում էր իր նշանակությունը: Մյուս կողմից՝ Փոքր Ասիայում զնալով հզորացող քյուրքական պետական կազմավորումները սպառնում էին իրենց ձեռքը վերցնել Մերձավոր Արևելքում նվաճողական քաղաքականության գերակայությունը: Առաջ անցնելով մանյուլքներից՝ թուրքերն իրենք կարող էին նվաճել թե՛ Կիլիկյան Հայաստանը, և թե՛ Կիպրոսը, ինչն ի վերջո կհանգեցներ նրանց առևտրատնտեսական, իսկ ապա նաև քաղաքական գերակայությանն Արևելյան Միջերկրականում ու Մերձավոր Արևելքում: Այս դեպքում արդեն եգիպտոսի սուլթանությանը մնում էր անցնել վճռական քայլերի, որոնցում Հայոց թագավորության նվաճմանն առաջնահերթ նշանակություն էր տրված:

ԵՋՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ հանրագումարի են բերվում առենախոսության հիմնական արդյունքներն ու եզրահանգումները:

1. Աշխարհագրական նպաստավոր պայմանները Կիլիկյան Հայաստանի միջազգային առևտրում ներգրավվելու կարևորագույն գրավականներից էին: Դրա հետ մեկտեղ, Կիլիկիան գտնվում էր XIII-XIV դդ. Մերձավոր Արևելքի ցամաքային մայրուղիների ցանցում: Տարաբնույթ սկզբնաղբյուրների հետազոտությունը ցույց է տալիս, որ Այալը և հայկական մյուս նավահանգիստները լիարժեքորեն ընդգրկվել էին միջազգային նավագնացության համակարգում, իսկ դրանց առևտրական կապերը ներառում էին զրեթե ամբողջ Միջերկրական ծովը:

2. Զարգացած գյուղատնտեսության և արհեստների շնորհիվ Կիլիկյան Հայաստանը միջազգային առևտրում ներկայանում էր տեղական բազմաբնույթ որակյալ ապրանքներով, որոնք հայտնի էին հեռավոր շատ երկրներում: Էլ ավելի հարուստ կազմություն ուներ տարանցիկ ապրանքների տեսականին: Կիլիկիա ներմուծված և այնտեղից արտահանված ապրանքների ուտոմնափրությունը կարող է արտահայտիչ, մասնավոր օրինակ դիտվել Հարավային Եվրոպայի և Ասիայի միջև XIII-XIV դդ. ձևավորված ապրանքափոխանակության կազմության վերլուծության համար: Ըստ այդմ, հստակորեն ուրվագծվում է, որ տվյալ ժամանակաշրջանում Եվրոպայից արտահանված ապրանքների հաշվեկշռում մեծամասնություն են կազմել պատրաստի արտադրանքները, մինչդեռ Ասիան առավելապես ներկայացել է հումքային ապրանքներով:

3. Կիլիկյան Հայաստանում լայն տարածում էին գտել XIII-XIV դդ. միջերկրածովյան առևտրի կազմակերպման հիմնական եղանակները: Տարաբնույթ գործարքներից և փոխառություններից զատ, մեծ կիրառություն ունեին դրամական փոխանցումները, որոնք իրականացվում էին մի կողմից Կիլիկիայի, իսկ մյուս կողմից՝ Արևելյան Միջերկրականի ու հարավեվրոպական խոշոր քաղաքների միջև: Դրանց շնորհիվ Կիլիկյան Հայաստանը հայտնվել էր ֆինանսատնտեսական բավական զարգացած համակարգի կազմում:

4. Կիլիկյան Հայաստանում միջազգային առևտրի զարգացմանը նպաստող կարևորագույն գործոններից էր արդյունավետ հարկային քաղաքականությունը: Պետությունն ուներ հարկահանության համար անհրաժեշտ պետական հաստատություններ ու ենթակառուցվածքներ: Հայ

արքաների սահմանած ցածր մաքսատուրքերն ու ապահովության երաշխիքներն օտարազգի վաճառականների համար գրավիչ պայմաններ էին ստեղծում:

5. XIII դ. անմիջապես սկզբից կիլիկյան քաղաքներում սկսեցին հանգրվանել օտարազգի վաճառականական առաջին համայնքները: Եթե սկզբնապես Արևելյան Միջերկրականում Վենետիկի և Ջենովայի գործերը կառավարվում էին խաչակիրների քաղաքներում հաստատված նրանց ներկայացուցչությունների կողմից, ապա 1270-ական թվականներից սկսած՝ հատուկ Կիլիկյան Հայաստանի համար նշանակվեցին առանձին հյուպատոսություններ: Կիլիկիայում եվրոպացիների կառուցած տարատեսակ շինությունների թվում հատկապես աչքի էին ընկնում կազմակերպված համայնքին բնորոշող հաստատությունները՝ եկեղեցիներ, դասարան, հյուպատոսարան և այլն: Իսկ Այաս այցելած իտալացի ուսուցիչների մասին հիշատակությունները վկայում են եթե ոչ դպրոցների, ապա համեմայն դեպք համայնքներում կրթական որոշակի գործունեության մասին:

6. Սկզբնաղբյուրներում Կիլիկիայի հայ վաճառականության մասին վկայությունների սակավաթիվ լինելն ամենևին չի նշանակում, որ նրանք կարևոր դեր չեն խաղացել պետության միջազգային առևտրում: Ի տարբերություն եվրոպացի վաճառականների, որոնց տարաբնույթ պայմանագրերը ձևակերպում էին իրենց նոտարական գործակալները և ուղարկվում եվրոպական դիվաններ՝ հայերը, նույնիսկ, եթե կիրառել են նման գործելանկերայ, այդպիսի փաստաթղթեր մեզ չեն հասել: Այնուամենայնիվ, փաստերը ցույց են տալիս, որ Կիլիկիայի հայ վաճառականության գործունեության հիմնական ուղղորտները մի կողմից Այաս-Թավրիզ մայրուղով ընթացող առևտուրն էր, իսկ մյուս կողմից՝ մամուլքների ու եվրոպացիների միջև առևտրական միջնորդությունը:

7. Միջերկրածովյան առևտրում Կիլիկյան Հայաստանի ներգրավումը, աշխարհաքաղաքական վճռորոշ իրադարձություններով պայմանավորված՝ ընթացել է հստակ արտահայտվող ժամանակափուլերով. ա) Առաջին փուլը հարկ ենք համարել նախանշել հենց 1201 թվականով, երբ Սալահ ադ-Դինի արշավանքներից հետո խաչակիրների նավահանգիստներում առևտրական գործունեություն ծավալող իտալական հանրապետություններն իրենց հայացքներն ուղղեցին արդեն լայն ծովափ ունեցող Կիլիկյան Հայաստանին: Չարգացումներին մեծ թափ հաղորդեց նաև Լատինական կայսրության ձևավորումը, որից հետո հատկապես ջենովացիներն ավելի մեծ շահագրգռվածությամբ ձգտեցին դեպի Կիլիկիա. բ) Հաջորդ փուլը սկզբնավորելու համար որպես ժամանակային սահման անհրաժեշտ ենք համարել անրագրել Մերծավոր Արևելքում 1240-ական թվականներին մոնղոլական արշավանքներով, սակայն դրա գագաթնակետն, անկասկած, Հուլավուի կողմից 1258 թ. Բաղդադի գրավումն էր: Կիլիկյան Հայաստանը դարձավ Իլխանության և Արևմուտքի միջև ձևավորվող քաղաքական, ինչպես նաև տնտեսական համագործակցության կարևորագույն դերակատարներից: Բաղդադի անկումն անբողջովին ձախողեց Մերծավոր Արևելքի առևտրական ճանապարհների ցանցը, որտեղ առաջնային նշանակություն ստացավ Այաս-Թավրիզ մայրուղին: 1261 թ. Բյուզանդիայի կայսրության վերականգնումն ու Նինֆեյան պայմանագիրը արեցին ջենովա-վենետիկյան հակամարտությունը:

Եթե Ջենովայի առջև լայն բացվեցին Աև ծովի դարպասները, ապա Վենետիկը սկսեց ավելի կայունացնել իր դիրքերն Արևելյան Միջերկրականում՝ հասկապես Կիլիկյան Չայաստանում: 1268 թ. Անտիոքի նվաճումը խաչակրաց տիրույթների մոտավորատ անկման ահագանգն էր, որից հետո իտալական հանրապետությունները սկսեցին էլ ավելի ամրացնել իրենց դիրքերը Չայոց թագավորությունում: Արդյունքում Կիլիկիա այցելող և այնտեղ բնակություն հաստատող եվրոպացի վաճառականության թվաքանակն աճում է, իսկ նրանց համայնքային կյանքն ավելի կազմակերպված հիմքերի վրա է դրվում. գ) Երրորդ՝ անճնավճռական ժամանակախույր մեկնարկեց 1291 թ. Արևելքում խաչակիրների անկումով, որից հետո Կիլիկյան Չայաստանը հարավեվրոպական պետությունների և Եգիպտոսի սուլթանության տիրույթների միջև ընթացող առևտրական փոխհարաբերություններում ստանձնեց կարևորագույն միջնորդ երկրի դեր: Այդ դերակատարումն ավելի ընդգծված բնույթ էր կրում հատկապես պապական արգելքների խստացման ժամանակամիջոցների ընթացքում: Ընդ որում, ընդհուպ մինչև 1337 թ. Այասի անկումը, միջազգային առևտրում Կիլիկյան Չայաստանի նշանակությունը մշտապես վերելք է ապրել:

8. Հետագոտելով Եվրոպայում և Արևելքում XIII-XIV դդ. տեղի ունեցած քաղաքական շրջադարձային իրադարձությունների և Կիլիկյան Չայաստանի միջազգային առևտրական պայմանագրերի կնքման ժամանակագրական տվյալները՝ անմիջապես աչքի է զարնում դրանց փոխպայմանավորվածության բարձր աստիճանը: Սովորաբար քաղաքական նշանակալից յուրաքանչյուր փոփոխությանն անմիջապես հաջորդել է Վենետիկի, Ջենովայի կամ եվրոպական այլ պետությունների հետ առևտրական պայմանագրերի ստորագրումը: Դա թույլ է տալիս փաստելու, որ Կիլիկյան Չայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում միջազգային առևտրի վրա խարսխված տնտեսական շահի գործոնն առաքնահերթ նշանակություն է ունեցել: Նկատի առնելով 1337 թ. Այասի անկմանը նախորդած, ինչպես նաև հաջորդած աշխարհաքաղաքական զարգացումները գտնում ենք, որ Եգիպտոսի սուլթանության ռազմավարության կազմում տնտեսական և քաղաքական շահերը գրեթե համընկնում էին, ուստի ղեկար էր դրանց միջև հստակ սահմանազատում անցկացնել: Անշուշտ, միակողմանի կլինի, եթե փորձենք Կիլիկիայի հայկական պետության դեմ մամուլքների իրականացրած կործանարար հարվածները պարզապես պայմանավորել նրանց և հայկական նավահանգիստների առևտրական մրցակցությամբ: Չայոց թագավորությանը կտրելով ծովային ելքից՝ Եգիպտոսի սուլթանության համար լուծվում էին թե՛ ռազմաքաղաքական, և թե՛ տնտեսական առաջնահերթ խնդիրները: Մասնավորապես դրանով Վենետիկը և Ջենովան զրկվում էին Ափայի խորքերից Միջերկրական ծով դուրս եկող կարևորագույն ելքից, ինչը բավական մեծացնում էր նրանց կախվածությունը մամուլքյան տերությունից: Միաժամանակ, Եգիպտոսի սուլթանությունը փաստորեն վերջ էր դնում տնտեսական շրջափակման սպառնալիքին: Կիլիկյան Չայաստանի տնտեսական ներուժին ծանր հարված հասցնելուց զատ, մամուլքները լուծում էին իրենց քաղաքական գերնպատակները, որոնք էին հիմնովին չեզոքացնել Իրանի մոնղոլների և Արևմուտքի երկարատև համագործակցությունը և դրա զարգացման հեռանկարները և, վերջապես, հաստատվելով Փոքր Ասիայում,

կասեցնում թյուրքական պետությունների դեպի Միջերկրական ծով առաջխաղացումը:

Առեմախտության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Այսաի և Ալեքսանդրիայի առևտրական մրցակցությունը (XIII դ. երկրորդ կես - XIV առաջին կես), Հայոց պատմության հարցեր, N 8, Երևան, 2007, էջ 95-105:
2. Պապական արգելքները և Կիլիկիայի հայկական պետության առևտուրը (1291-1344 թթ.), Հայոց պատմության հարցեր, N 9, Երևան, 2008, էջ 71-80:
3. Կիլիկիայի Հայկական պետության և Արևմտյան Եվրոպայի տնտեսական կենտրոնների միջև առևտրական առնչությունների պատմությունից, Հայոց պատմության հարցեր, N 10, Երևան, 2009, էջ 60-77:
4. Միջերկրածովյան առևտրի կազմակերպման եղանակները Կիլիկյան Հայաստանում XIII-XIV դդ., Հայոց պատմության հարցեր, N 11, Երևան, 2010, էջ 57-77:
5. Իտալացի վաճառականությունը Կիլիկյան Հայաստանում (XIII-XIV դդ.), ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, N 1-2, Երևան, 2010, էջ 81-100:

Геворкян Зограб Грачевич

КИЛИКИЙСКОЕ АРМЯНСКОЕ ГОСУДАРСТВО
В СИСТЕМЕ СРЕДИЗЕМНОМОРСКОЙ ТОРГОВЛИ
XIII-XIV вв.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”.

Защита состоится 24-го декабря в 14⁰⁰ ч. по адресу: г. Ереван, пр. Маршала Баграмяна 24г на заседании специализированного совета 004 при Институте истории Национальной Академии Наук РА.

РЕЗЮМЕ

С начала XIII века Киликийское Армянское государство внедрилось в систему самой развитой экономической зоны мира XIII-XIV веков – в средиземноморскую торговлю. В данном исследовании представляется роль Киликийской Армении в средиземноморской торговле.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения и списка использованных источников и литературы.

В введении представляются научное значение, важность и актуальность выбранной темы, формируются цели и задачи исследования, разъясняются методологические основы исследования, научная новизна работы, представляется обзор использованных источников и литературы.

В первой главе диссертации представляются географические условия Киликии, а также морские и сухопутные торговые пути между Востоком и Западом перекрещивающийся в Киликийской Армении.

Во второй главе исследуется структура международной торговли Киликийской Армении, в частности ассортимент товаров и товарообмен, методы организации международной торговли, а также налоговая политика Киликийского армянского государства в сфере международной торговли.

В третьей главе представляется этнический и социальный состав купечества Киликийской Армении. Представляется деятельность армянского купечества. Выявляются роль иностранного купечества в общественно-политической жизни Киликии, а также степень развитости их общинной жизни в киликийских городах и т. д.

В четвертой главе рассматривается степень взаимосвязи международных политических и торгово-экономических отношений Киликийской Армении. Выявляется влияние геополитических процессов XIII-XIV веков в Европе и на Востоке на международных торговых отношений.

В заключении диссертации изложены выводы по основным рассмотренным в работе вопросам.